

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացված առևտրային գործունեության համառոտ տեսություն




2009 թվականի I եռամսյակ

2009 թվականի հունվար-մարտ ամիսներին ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում իրականացվել է բաժնետոմսերի, կորպորատիվ և պետական պարտատոմսերի, ՌԵՊՈ գործիքների, ինչպես նաև արտարժույթի առևտուր: Ավանդաբար առավել ակտիվ է եղել կորպորատիվ պարտատոմսերի և արտարժույթի բորսայական առևտուրը, մինչդեռ բաժնետոմսերով և պետական պարտատոմսերով կնքվող գործարքների ծավալները նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ նվազել են:

Բաժնետոմսերի բորսայական առևտուր

2009-ի առաջին եռամսյակի ընթացքում բորսայում բաժնետոմսերով կնքվել է յոթ գործարք՝ 3,408,500 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա են հանդիսացել ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում առևտրին թույլատրված՝ «Արարատբանկ» ԲԲԸ (ARBK), Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (ESHG), «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ (HEZB) և «Ձարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ (ZHBK) ընդհանուր թվով 626 հասարակ անվանական բաժնետոմսեր:

Նկար 1. 2008-2009-ին բաժնետոմսերով բորսայական առևտուրը



Նախորդ եռամսյակի համեմատ գործարքների թե՛ քանակը, թե՛ ծավալը նվազել են: Այս առումով հարկ է նշել, սակայն, որ 2008-ի դեկտեմբեր ամսին բորսայում կնքվել է «Ալմաստ» ԲԲԸ բաժնետոմսերով վեց խոշոր գործարքներ՝ 131,106,040 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, ինչը հանգեցրել է 2008-ի չորրորդ եռամսյակում առևտրի արտասովոր բարձր ծավալների:

31.03.2009-ի դրությամբ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում ցուցակված և առևտրին թույլատրված է եղել ինը թողարկողի 10 բաժնետոմս, իսկ բորսայական շուկայի


ընդհանուր կապիտալիզացիան¹ կազմել է 53,305,639,530 ՀՀ դրամ: 31.12.2008-ի համեմատությամբ շուկայի կապիտալիզացիան նվազել է մոտ 1.2%-ով՝ պայմանավորված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ (HEZB) և Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (ESHG) բաժնետոմսերի շուկայական գնի նվազմամբ:

Կորպորատիվ պարտատոմսերի բորսայական առևտուր

2009-ի առաջին եռամսյակի ընթացքում ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում կորպորատիվ պարտատոմսերով կնքվել է 271 գործարք՝ 3,682,422,305 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Գործարքների առարկա է հանդիսացել 12 թողարկողի 567,116 պարտատոմս: Նախորդ եռամսյակի համեմատ կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա կորպորատիվ պարտատոմսերի քանակը և գործարքների ծավալը աճել են, համապատասխանաբար, 1.9, 1.74 և 4.11 անգամ (տես Նկար 2): Նշենք, որ այս աճը պայմանավորված է եղել նաև 2009-ի առաջին եռամսյակի ընթացքում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (CVBKB1), «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (HSBCB1) և «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ (SHNCB4) կողմից նոր պարտատոմսերի թողարկմամբ և բորսայում ցուցակմամբ:

31.03.2009-ի դրությամբ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում ցուցակված է եղել 11 թողարկողի 14 պարտատոմս: Եռամսյակի ընթացքում տեղի ունեցել կորպորատիվ պարտատոմսերի միայն մեկ մարում՝ «Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ (ARCPB1), 26.03.2009-ին:

Նկար 2. 2008-2009-ին կորպորատիվ պարտատոմսերով բորսայական առևտուրը



ՈԵՊՈ գործիքների բորսայական առևտուր

¹ Շուկայի կապիտալիզացիան հաշվարկված է ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում 31.03.2009-ի դրությամբ ցուցակված և առևտրին թույլատրված հասարակ անվանական այն բաժնետոմսերի համար, որոնցով ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում երբևէ կնքվել են գործարքներ:

2009-ի առաջին եռամսյակի ընթացքում բորսայում կնքված ՌԵՊՈ գործարքների ծավալը կազմել է 861,966,150 ՀՀ դրամ: ՌԵՊՈ գործարքների առարկա են հանդիսացել «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ (SHNCB4) և «Էլիտ Գրուպ» ՓԲԸ (ELTGB2) պարտատոմսերը, ինչպես նաև «Արարատբանկ» ԲԲԸ բաժնետոմսերը (ARBK): Եռամսյակի ընթացքում մարված ՌԵՊՈ պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 200,003,212 ՀՀ դրամ:

Պետական պարտատոմսերի բորսայական առևտուր


2009-ի առաջին եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերով բորսայական առևտրի ծավալը (զննան գնով) կազմել է 178,779,348 ՀՀ դրամ, ինչը 81.92%-ով պակաս է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշից, երբ նկատվել է գործարքների ծավալի աննախադեպ աճ: Գործարքների քանակը կազմել է 18, նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազելով 53.85%-ով: Պետական պարտատոմսերով գործարքների մանրամասները բերված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. 2009-ի հունվար-մարտ ամիսներին պետական պարտատոմսերով կնքված գործարքներ

Ծածկագիր	Թողարկման ծավալ	Կնքված գործարքներ				Վերջին գործարք	
		Միջ. կշռվ. գին	Գործ. քանակ	Գործ. ծավալ (անվանական արժեքով)	Գործ. ծավալ (զննան գնով)	Գին	Կնքման ամսաթիվ
AMGB0718C145	8,000,000	9.0149%	1	50,000,000	52,584,250	9.0149%	22.01.2009
AMGB10072186	93,798,000	12.6186%	5	40,510,000	35,653,968	13.5499%	19.03.2009
AMGB20072283	83,600,900	13.5083%	3	17,491,000	14,819,594	13.5895%	20.03.2009
AMGN36052110	115,574,140	10.5457%	3	17,300,000	16,555,126	10.7601%	18.03.2009
AMGN60052135	55,800,600	10.1969%	6	60,000,000	59,166,410	10.0572%	02.02.2009
Ընդամենը՝			18	185,301,000	178,779,348		


Արտարժույթի բորսայական առևտուր

Նկար 3. 2008-2009-ին պետական պարտատոմսերի բորսայական առևտուրը




2009-ի առաջին եռամսյակի ընթացքում ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիայում արտարժույթով կնքվել է 2,229 գործարք, բոլորը՝ ԱՄՆ դոլարով: Կնքված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 163,231,785,742 ՀՀ դրամ (USD 523,055,000): Նախորդ եռամսյակի համեմատ ԱՄՆ դոլարով կնքված գործարքների ծավալը աճել է 20.59%-ով, իսկ գործարքների քանակը նվազել 33.80%-ով: ԱՄՆ դոլարով և եվրոյով բորսայական առևտրի ծավալների և գործարքների թվի դինամիկան ներկայացված է, համապատասխանաբար, Նկար 4.1-ում և 4.2-ում:

Նկար 4.1. 2008-2009-ին ԱՄՆ դոլարով կնքված գործարքներ



Նկար 4.2. 2008-2009-ին եվրոյով կնքված գործարքներ



03.03.2009-ին տեղի է ունեցել ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ աճ, երբ նախորդ առևտրային նստաշրջանի համեմատությամբ փակման գինն աճել է 22%-ով՝ մինչև 372.49 ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ, 2009-ի առաջին եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարով կնքված վերջին գործարքի գինը կազմել է 371 ՀՀ դրամ, 2008-ի չորրորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ աճելով 21.6%-ով:

ՆԱՍԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա